ՇՆՉԻՐ ԱՉԱՏ

ԱՐՇԱՎ ԾԽԵԼՈՒ ԴԵՄ

Նպատակ

Խթանել առողջ ապրելակերպը, պաշտպանելով պասիվ ծխողներին:

Գործողություններ

Նկարել հակածխախոտային թեմայով պատկերներ ամբողջ Երևանի տարածքով:

Ծրագրի նկարագրությունը

Բազմաթիվ միջազգային առողջապահական կազմակերպությունների գնահատմամբ հայերի մոտ 70%-ը ծխում են, ինչի արդյունքում դասում են Հայաստանը աշխարհում ամենաշատ ծխող երկրների շարքին և դարձնում Հայաստանը Եվրոպայում ծխելու ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկիրը: Սա անմիջապես կապված է Հայաստանի աղքատության ցուցանիշի հետ, քանի որ շատերը օգտագործում են ծխախոտը որպես սթրեսից և ձանձրույթից ազատվելու միջոց:

Ծխախոտի այսպիսի մեծ սպառումը հայերի շրջանում հանգեցնում է ծխախոտի սպառման հետ կապված հիվանդությունների աճող ռիսկին՝ ներառյալ թոքերի քաղցկեղը, սրտանոթային և թոքերի հիվանդությունները:

Երեխաներն էլ խոցելի են դառնում այնպիսի հիվանդությունների հանդեպ, ինչպիսիք են մանկական մահացությունը, ականջի ինֆեկցիաները և ալերգիաները: Համաձայն Առողջապահության միջազգային կազմակերպության՝ 13-15 տարեկան երեխաների գրեթե 90%-ը ապրում են տներում, որտեղ անընդհատ ենթարկվում են եկրորդական ծխի ազդեցության՝ որպես պասիվ ծխող:

«Այո»-ում մենք ցանկանում ենք փոխել մարդկանց մտածելակերպը ծխելու և երկրորդական ծխի վերաբերյալ: Մենք կսկսենք արշավ, որի ժամանակ կիրավիրենք Հայաստանում ազատ ոճի ամենահայտնի 20-30 նկարիչների, ովքեր ծխելու վնասակարության թեմայով իրենց արվեստը կպատկերեն ողջ Երևանում:

Երևանցիները կտեսնեն այդ նկարներից շատերն ամեն օր աշխատանքի գնալու ճանապարհին կամ զբոսանքի ժամանակ:

Յուրաքանչյուր նկար կունենա QR կոդ, որպեսզի մարդիկ կարողանան ավելին իմանալ նածագծի և «Այո»-ի աշխատանքի մասին: Մենք մարտահրավեր ենք նետում Երևանի սովորույթներին և կոչ ենք անում, որպեսզի մարդիկ վերանայեն իրենց ապագայի և իրենց երեխաների ապագայի հարցը: Կարճ ասած՝ մենք «կթափահարենք» քաղաքը:

Մենք նաև կապահովենք երեք նկարիչներին ֆինանսական մրցանակներով, կազմակերպելով այդ նկարների մրցույթ, որն էլ կընտրվի հատուկ ժյուրիի միջոցով: Հաղթողները կորոշվեն ելնելով այնպիսի ցուցանիշներից, ինչպիսիք են ստեղծարարությունը և հաղորդակցության տարրերը:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Պատի նախապատրաստական աշխ.	30	924,000	$1,945
Նյութերի տրամադրում յուր, նկարչի համար	30	1,500,000	$3,158
Մրցանակ 1-ին տեղի համար	1	641,250	$1,350
Մրցանակ 2-րդ տեղի համար	1	318,250	$670
Մրցանակ 3-րդ տեղի համար	1	190,000	$400
Այլ	1	95,000	$200

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 475 ՀՀ դրամ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

$7,723